ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/2» ԵԱԵԿԱԳՐՈՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ(ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝ ԲԱՑՈՂ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ

ք. Երևան 07.12.2017թ.

Ժամը 11[00]

Բացողներ՝

ՀՀ ՊՆ Տ և ՀԿ վարչության ՀԿ բաժնի գլխավոր մասնագետ, Ա. Ավագյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ֆինանսական վարչության ֆինանսական հոսքերի բաժնի 1-ին կարգի մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի առաջատար ծառայող Ս. Սալայան:

Օրակարգը՝

1. **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/2»** ծածկագրով ԳՀ ընթացակարգին **http://www.armeps.am** էլեկտրոնային կայքում ներկայացված հայտերը:

Սահմանված ժամկետում **http://www.armeps.am** էլեկտրոնային կայքում բեռնվել են ներքոհիշյալ մասնակիցների հայտերը, որոնք սահմանված կարգով հաստատվել և ներկայացվել են գնահատման հաջորդ փուլ.

- Սահմանված կարգով ներկայացված մասնկիցների հայտեր, որոնք ընդունվել են **http://www.armeps.am** էլեկտրոնային կայքի կողմից և համարվել են հետագա գնահատման համար ընդունելի .

Հ/հ	Մասնակիցների անվանում
1	«ԳԵՎՏԻԳ» ՍՊԸ
2	«Պերֆեկտ» ՍՊԸ
3	«Պրես Ստենդ» ՍՊԸ

բացող Ա. Ավագյան

բացող Ս. Սալայան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ(ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 07.12.2017թ.
ժամը 11[00]

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան (ԳԱՊ),
ՀՀ ՊՆ Տ և ՀԿ վարչության ՎՏԱ բաժնի պետ, Կ. Պողոսյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Գ. Ուստյան,
ՀՀ ՊՆ ՌՈ հատուկ օպերատիվ ծառայության բաժնի սպա, լեյտենանտ Ս. Նիկոլյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյան,
Գնումների համակարգող՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետի տեղակալ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Ա. Բաղրամյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Բաղրամյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4.Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ա. Բաղրամյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար «Բաժանորդագրման եվ մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/2» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/հ	Մասնակիցների անվանում
1	«ԳԵՎՏԻԳ» ՍՊԸ
2	«Պերֆեկտ» ՍՊԸ
3	«Պրես Ստենդ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

14.12.2017թ-ին գնահատող հանձնաժողովը շարունակեց գնահատման աշխատանքները.

2 .«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ա. Բաղրամյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտը **armeps.am** կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:
2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտում հրավերով /հարցումով/ պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերը առկա են:

2.3 «Պերֆեկտ» ՍՊԸ-ի հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/2» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), «ԳԵՎՏԻԳ» ՍՊԸ-ի հայտի ապահովումը ներկայացված է սխալ վճարման պահանջագրում նշվել է ամիս, ամսաթիվ և տարեթիվ, միաժամանակ բոլոր փաստաթղթերում էլեկտրոնային ստորագրությունը արտատպվելու դեպքում անտեսանելի է, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայտի ապահովումը և գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «ԳԵՎՏԻԳ» ՍՊԸ-ի հայտը, իսկ «Պրես Ստենդ» ՍՊԸ-ի հայտում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ լիազորագրում ընթացակարգի ծածկագիրը սխալ է լրացված: Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը պահանջելով շտկել անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

15.12.2017թ-ին գնահատող հանձնաժողովը շարունակեց գնահատման աշխատանքները.

Սահմանված ժամկետում «Պրես Ստենդ» ՍՊԸ-ի կողմից ուղարկվեց հայտում առկա անհամապատասխանության շտկված տարբերակը, որը ընդունվեց գնահատող հանձնաժողովի կողմից:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ա. Բաղրամյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ է ներկայացրել 2 մասնակից.

ՀՀ	Ապրանքի անվանումը	Քանակը	Նախահաշվ. գումարը	Հաղթող կազմակերպության			Մրցույթին մասնակցող կազմակերպությունների		
				անվանումը	գինը		անվանումները	գինը	
					առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով		առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով
1	Բաժանորդագրման ծառայություն /Հայաստանի Հանրապետություն թերթ/	272	6854400	«Պրես Ստենդ» ՍՊԸ	6854400	-	«Պրես Ստենդ» ՍՊԸ	6854400	-
2	Մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություն /ՀՀ ԶՈՒ կազմավորման օր/	1	55792200	«Պերֆեկտ» ՍՊԸ	47000000	-	«Պերֆեկտ» ՍՊԸ	47000000	-
							«ԳԵՎՏԻԳ» ՍՊԸ	48500000	-
3	Մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություն /կանանց տոն/	1	6090000	Առաջարկի բացակայություն					

3.2 Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Մասնակիցների հետ բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ա. Բաղրամյան)

4.1 **15.12.2017թ.** հայտերի բացման ավարտի օրը գնահատող հանձնաժողովը **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/2»** ծածկագրով ընթացակարգի գնահատման արդյունքում 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչել 1-ին չափաբաժնում «Պրես Ստենդ» ՍՊԸ –ին, իսկ 2-րդ չափաբաժնում «Պերֆեկտ» ՍՊԸ-ին, միաժամանակ գնահատող հանձնաժողովը 3-րդ չափաբաժինը հայտարարեց չկայացած առաջարկի բացակայության պատճառով:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/2»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ա. Բաղրամյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Բաղրամյան)

6.1 **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/2»** ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը, ժամը 11[00]-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

15.12.2017թ.

Գնահատող (ԳԱՊ) Վ. Գասպարյան

Գնահատող Կ. Պողոսյան

Գնահատող Գ. Ուստյան

Գնահատող Ս. Նիկոլյան

Գնահատող Կ. Բրուտյան

Գնումների համակարգող՝ Ա. Բաղրամյան